Կարգապահական գործ թիվ ԿԳ-17181

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018թ-ի հունիսի 16-ի թիվ 133-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/99-Ա

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՎԱՐԴՈՒՀԻ ԷԼԲԱԿՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Սեդրակ Ասատրյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբաններ Վարդուհի Էլբակյանի (արտոնագիր՝ թիվ 28) և Կարեն Հովհաննիսյանի (արտոնագիր՝ թիվ 1352) (**այսուհետ՝ նաև Պատասխանողներ**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

19.10.2017թ. Պալատում մուտքագրվել է Ռուզան Ադանալյանի **(այսուհետ՝ նաև Դիմող)** դիմումը, որում նշվել է, որ թիվ ՇԴ2/0037/01/15 քրեական գործի շրջանակներում որպես տուժողի իրավահաջորդ դիմել է փաստաբան Վարդուհի Էլբակյանին, իսկ վերջինս համաձայնել է ներկայացնել իր շահերը գործընկերոջ՝ փաստաբան Կարեն Հովհաննիսյանի հետ: 2016թ. հուլիս ամսին Դիմողը լիազորել և հանձնել է Պատասխանողներին 10 հատորից բաղկացած քրեական գործի նյութերը: Ըստ Դիմողի՝ Պատասխանողները գործում ներգրավվել են՝ առանց իր հետ համապատասխան գրավոր պայմանագիր կնքելու, ինչպես նաև իրեն չեն տրամադրել ստացական առ այն, որ իրենից ստացել են 500.000 ՀՀ դրամ, մինչդեռ Դիմողն այդ կապակցությամբ Պատասխանող Վարդուհի Էլբակյանին տվել է անձնագրի պատճենը, սակայն վերջինս տարբեր պատճառաբանություններով պայմանագիր չի կազմել:

Դիմողի պնդմամբ, Պատասխանողները տարբեր պատճառաբանություններով դատական նիստերը հետաձգել են, գործի նյութերին չեն ծանոթացել, որոշակի դեպքերում ինքն առանց փաստաբանների է մասնակցել դատական նիստերին, ավելին՝ 19.01.2017թ., երբ մեղադրողը հրապարակել է փաստաթղթեր, որոնց վերաբերյալ անհրաժեշտ

միջնորդությունները պետք է ներկայացվեին Պատասխանող Վարդուհի Էլբակյանի կողմից, վերջինս նույնիսկ գործի նյութերը դատարան չի բերել և միջորդությունները չի ներկայացրել: Վարդուհի Էլբակյանը գործի շրջանակում, բացի դատական նիստերը հետաձգելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելուց, ոչինչ չի արել, քրեական գործին վերաբերվել է անլուրջ և վերացական: Ըստ Դիմողի՝ նույնիսկ գործին առնչվող անհրաժեշտ բոլոր միջնորդությունները և հարցադրումները կազմվել են իր կողմից, իսկ Վարդուհի Էլբակյանը դրանք դատարանում պարզապես ընթերցել է:

Դիմողը նաև նշել է, որ փաստաբան Վարդուհի Էլբակյանի վերոնշյալ վարքագծի պատճառով 14.08.2017թ. դիմել է նրան՝ վճարված գումարը վերադարձնելու պահանջով, սակայն 28.08.2017թ. փոստով ստացել է վերջինիս պատասխան գրությունը, ըստ որի՝ Դիմողը հրավիրվել է քննության առնելու մատուցված, մատուցվելիք ծառայությունների և գումարի վերաբերյալ պահաջների հարցերը: Դիմողը հայտնել է Պատասխանող Վարդուհի Էլբակյանին, որ այլևս չի վստահում նրան և պահանջում է վերադարձնել առձեռն վճարված ամբողջ գումարը, սակայն Վարդուհի Էլբակյանը չի արձագանքել և գումարը չի վերադարձրել:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 20.11.2017թ. թիվ 451-Ա/ԿԳ-17181 որոշմամբ փաստաբաններ Կարեն Հովհաննիսյանի և Վարդուհի Էլբակյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.8.5 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Սույն կարգապահական գործով Դիմող է ճանաչվել Ռուզան Ադանալյանը:

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Կարեն Քամալյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Դիմողը ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ իրեն ցուցաբերվել է ոչ բարեխիղճ և ոչ պատշաճ ծառայություն հատկապես այն մասով, որով Պալատը մերժել է կարգապահական վարույթի հարուցումը, այն է՝ գումարը տրամադրելու, պայմանագիր չկնքելու, ստացական չտրամադրելու վերաբերյալ: Իրենց բացատրություններում Պատասխանողները որևէ առարկայական հիմնավորում չեն ներկայացրել Դիմողի դիմումում նշված հանգամանքների վերաբերյալ: Մինչդեռ, Դիմողի մասնակցությամբ գործով դատական նիստերը շինծու ձևով հետաձգվել են, ինչի վերաբերյալ Պատասխանող Կարեն Հովհաննիսյանը տեղյակ է եղել, սակայն ժամանակին միջոցներ չի ձեռնարկել՝ պարզելու, թե ինչու են դատավորը կամ պաշտպանական կողմը դիտավորյալ ձգձգում դատական նիստերը: Մասնավորապես, հուլիսի 14-ի նիստից հետո մինչև 2017թ. հունվարի 19-ը գործի դատական քննություն տեղի չի ունեցել: Թեև Դիմողը

մեկ տարի անց է ներկայացրել դիմում Պատասխանողների դեմ, սակայն այդ մեկ տարվա ամբողջ ընթացքում չէ, որ Պատասխանողների կողմից իրեն փաստաբանական ծառայություն է մատուցվել: Դիմողը Պատասխանողներին լիազորել է ներկայացնել քրեական գործով իր՝ որպես տուժողի շահերը 29.06.2016թ., որից հետո Պատասխանողները մասնակցել են ընդամենը մեկ դատական նիստի՝ լիազորման հաջորդ օրը՝ հունիսի 30-ին, որում խնդրել են դատարանին նիստը հետաձգել քրեական գործի նյութերին ծանոթանալու համար: Հաջորդ նիստը նշանակվել է հուլիսի 14-ին, որին Պատասխանողները ներկայացել են, սակայն ըստ էության ծանոթ չէին ոչ՛ գործի նյութերին և ո՛չ, ընդհանրապես, դատական գործին: Դիմողը Պատասխանողներին ներկայացրել է 10 հատորից կազմված քրեական գործի նյութերը, տվյալ գործով տարբեր հանցավոր դրվագների վերաբերյալ փաթեթներ և դատական նիստերի կրիչը: Մինչդեռ, Պատասխանողները ծանոթ չէին գործի նյութերին և, հետևաբար, տեղյակ չէին գործի նախապատմությունից, ինչը պետք է հանդիսանար նրանց գործունեության հիմքը: Հուլիսի 14-ի նիստում Պատասխանող Վարդուհի Էլբակյանը ներողություն է խնդրել մեղադրյալի պաշտպանից Դիմողի կատարած արտահայտությունների համար, որպիսի փաստը Պատասխանողներն իրենց բացատրությունում ժխտում են, սակայն, Դիմողի պնդմամբ, ինքը ներկայացրել է այդ հանգամանքի եղելության ապացույցը՝ տվյալ դատական նիստի կրիչը, որտեղ երևում է, որ Դիմողը փորձում է քողարկել Պատասխանողների անտեղյակությունը, և դրա մասին բարձրաձայնել է նաև պաշտպանական կողմը: Երբ սեպտեմբերի 29-ի նիստը տեղի չունեցավ, Պատասխանող Կարեն Հովհաննիսյանն այլևս չի իրականացրել Դիմողի ներկայացուցչությունը, ինչին Դիմողը համաձայնել է: 19.01.2017թ. դատական նիստին, երբ Դիմողը պետք է ցուցմունք տար, իր պնդմամբ, Պատասխանող Վարդուհի Էլբակյանն իր հետ չի քննարկել ցուցմունք տալու բովանդակային և տակտիկական հարցերը: Ավելին՝ Պատասխանող Էլբակյանն ընդհանրապես չէր հանդիպում Դիմողի հետ և գործի հետագա ընթացքը չէր քննարկում և չէր պարզաբանում, նույնիսկ Դիմողի հեռախոսազանգերին չէր պատասխանում: Արդյունքում հունվարի 19-ի դատական նիստում Դիմողը, նախապես Պատասխանողի կողմից հարցաքննությանը նախապատրաստված չլինելով, տվել է հակասական ցուցմունք, պաշտպանության կողմը ագրեսիվ վերաբերմունք է ցուցաբերել Դիմողի հարցաքննության ընթացքում, սակայն Պատասխանող Վարդուհի Էլբակյանը որևէ կերպ չի միջամտել և ի պաշտպանություն Դիմողի՝ որևէ գործողություն չի կատարել: Այնուհետև, երբ դատախազը հրապարակել է ԴՆԹ-ի եզրակացությունը, որը գործով կարևոր ապացույց էր, պարզվել է, որ այդ եզրակացությունը թերություններ ունի, դրա հետ կապված՝ առկա են կեղծիքներ, այդ փաստաթուղթը դատարան է ներկայացվել կիսատ, որի մասին ևս Պատասխանող Վարդուհի Էլբակյանը տեղյակ չէր և չգիտեր, որ Դիմողն այդ փաստաթղթի վերաբերյալ ունի առարկություններ և միջնորդություններ, ուստի՝ դատախազի կողմից այդ ապացույցի ներկայացման ժամանակ դատարանին որևէ միջնորդություն և առարկություն չի ներկայացրել: Գործով անհրաժեշտ էր վկա հրավիրել, ինչը ևս Պատասխանողը չի արել: Պատասխանողը քրեական գործի որևէ նյութ իր հետ դատարան չէր բերել, թեև այդ օրը պետք է հետազոտվեին ապացույցները: Դրա հետևանքով Պատասխանողը չի միջամտել ապացույցների հետազոտմանը: Նույն տրամաբանությամբ շարունակվել են նաև մյուս նիստերը: Եվս երեք նիստ հետաձգվել է, սակայն ոչ Պատասխանողի մեղքով: 06.06.2017թ. դատական նիստը տեղի է ունեցել, և հարցաքննվել է դատաբժիշկը: Սույն

նիստին ևս Պատասխանողը պատրաստ չէր, որևէ հարց դատաբժշկին չի առաջադրել, որևէ դատավարական գործողություն չի կատարել, իսկ Պատասխանողի փոխարեն դատաբժշկին հարցեր է տվել Դիմողը:

Ըստ Դիմողի՝ փորձ է արվել մեղադրյալին հիվանդ ներկայացնել դատական նիստերը հետաձգելու համար, մասնավորապես դատարանից պարբերաբար կանչեր են տրվել Շտապ օգնություն, և դատարանի շենքի մոտ Շտապ օգնության մեքենա է եկել, ինչը տեղի է ունեցել նաև 12.06.2017թ. դատական նիստին, սակայն Պատասխանողները որևէ կերպ երբևէ չեն փորձել պարզել՝ շինծու է արվում այդ ամենը, թե՝ ոչ: Փոխարենը՝ նշվածի շինծու բնույթը, ըստ Դիմողի, ինքն անձամբ է պարզել:

Դիմողը խնդրել է Պատասխանողին հարցում անել շաքարի գործարան, որտեղ աշխատել է մեղադրյալը՝ ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ նպատակ ունենալով այդպիսով պարզել մեղադրյալի հեռախոսի համարը, որը խիստ էական նշանակություն ուներ գործի համար և այդպիսով կարողանալ ստանալ նաև մեղադրյալի հեռախոսազանգերի վերծանումները, քանի որ քրեական գործում պարզապես նշված էր, որ մեղադրյալը հեռախոս չի ունեցել: Որոշակի ժամանակ անց Դիմողը հարցրել է Պատասխանողից, թե ինչ եղավ հարցումը, ինչին Պատասխանողը պատասխանել է, որ հարցման մեջ հասցեն սխալ է գրել, որի պատճառով գրությունը փոստից հետ է ուղարկվել: Դիմողը խնդրել է հասցեն շտկել և հարցումը նորից ուղարկել, ինչը Պատասխանողից կողմից չի արվել:

Ըստ Դիմողի՝ անհրաժեշտ է եղել դատարանին ներկայացնել միջնորդություններ, ինչը Պատասխանողների կողմից չի արվել: Պատասխանող Վարդուհի Էլբակյանի կողմից դատարան է ներկայացվել մեկ միջնորդություն 06.06.2017թ. նիստին, որը կազմվել է Դիմողի կողմից, ուղարկվել է Պատասխանողի էլեկտրոնային փոստին, և Պատասխանողը դատարանում ընթերցել է այն: Դրանից հետո Դիմողը Պատասխանող Էլբակյանի էլեկտրոնային փոստին ուղարկել է միջնորդություններ և խնդրել է Պատասխանողից իրավաբանական ձևակերպում տալ դրանց: Պատասխանողի կողմից որևէ գործ չի արվել, դատարանում հայտնվել է միայն, որ Դիմողն ունի միջնորդություն, իսկ Դիմողը, փաստորեն, միջնորդությունը կազմել է և ներկայացրել է, իսկ Պատասխանողն ունեցել է կրավորական դեր: Ավելին՝ անգամ վկայի հարցաքննությունն է Դիմողն իրականացրել:

Դիմողը դիմել է Պատասխանողին իրենց հետագա համագործակցությունը դադարեցնելու և իր գումարի վերադարձի հարցով, ինչին ի պատասխան՝ Պատասխանող Վարդուհի Էլբակյանն իրեն հրավիրել է իր գրասենյակ մատուցված կամ մատուցվելիք ծառայությունների հարցը քննարկելու համար: Դիմողը հրավերը մերժել է գրավոր ձևով՝ պատճառաբանելով, որ Պատասխանողին չի վստահում:

<u>3.2. Պատասխանողների համառոտ բացատրությունները.</u>

Կարգապահական գործի նախապատարաստման ընթացքում Պատասխանողները ներկայացրել են բացատրություն, որում հայտնվում է հետևյալը:

Իր բացատրության մեջ Պատասխանող **Վարդուհի Էլբակյանը** նշել է, որ Դիմողի՝ որպես քրեական գործով տուժողի իրավահաջորդի շահերի պաշտպանությունն ստանձնել է փաստաբան Արա Ղարագյոզյանի առաջարկությամբ: Դիմողը հրավիրվել է գրասենյակ, որտեղ նրա հետ զրուցել են Վարդուհի Էլբակյանը, մյուս Պատասխանող Կարեն

Հովհաննիսյանը և այդ ժամանակ ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիր, իսկ այժմ փաստաբան Հովսեփ Սարգսյանը:

Դիմողի գործի հանգամանքներին ծանոթանալուց հետո Պատասխանողների մոտ ձևավորվել է կարծիք, որ Դիմողն ունի ոչ ողջամիտ կասկածամիտ բնավորություն, քանի որ իր որդու սպանության քննության հետ առնչություն ունեցող յուրաքանչյուր պաշտոնատար անձի նկատմամբ ուներ ու արտահայտում էր թշնամություն և կասկած, որ բոլորը կաշառված են:

Դիմողի փաստարկումները լսելուց հետո Պատասխանողները որոշել են, մինչև գործն ստանձնելու վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը, զրուցել նաև Դիմողի դստեր հետ, քանի որ Դիմողը որդու սպանության գլխավոր մեղավոր էր համարում նաև նախկին ամուսնուն, ով բնակվում էր որդու հետ, իսկ դուստրը բնակվում էր Դիմողի հետ Երևան քաղաքում:

Որդու սպանության գործով ամբաստանյալի դատաքննությանը որպես վկա դատակոչված հոր և քրոջ դատարան չներկայանալը, ըստ էության ցուցմունքներ չտալը Պատասխանողները համարել են տարօրինակ և նաև Դիմողի դստեր հետ զրուցելու միջոցով փորձել են պարզել նշվածի պատճառը:

Ելնելով մարդկային վերաբերմունքից՝ Պատասխանողները որոշել են ստանձնել Դիմողի՝ որպես գործով տուժողի ներկայացուցչությունը, պայմանով, որ Դիմողը, առանց Պատասխանողների հետ խորհրդակցելու, որևէ դատավարական գործողություն չի իրականացնելու: Դիմողի կողմից Պատասխանողներին տրվել է որպես ներկայացուցիչներ՝ իրենց լիազորությունները հաստատող լիազորագիր:

Պատասխանողները գործում փաստացի ներգրավվել են 30.06.2018թ. նշանակված դատական նիստին և, հաշվի առնելով քրեական գործի ծավալը (10 հատոր), միջնորդել են դատարանին ողջամիտ ժամկետ տրամադրել քրեական գործի նյութերին ծանոթանալու համար:

Քրեական գործի նյութերին ծանոթանալուց հետո բազմաթիվ առիթներով, յուրաքանչյուր դատական նիստի նախօրյակին Պատասխանողները Դիմողի հետ քննարկել են իրենց մարտավարությունը, անգամ դատավարության մասնակցին առաջադրվելիք հարցերի հաջորդականությունը և բովանդակությունը, ինչն ակնհայտորեն Դիմողին ոգևորում էր:

Պատասխանող Վարդուհի Էլբակյանի պնդմամբ, իրենց կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակահատվածում Դիմողը երբևէ դժգոհություն չի արտահայտել և փոխադարձ շփման ընթացքում երկուստեք անվստահության մթնոլորտ չի ստեղծվել:

Իրավաբանական օգնության ցուցաբերման ընթացքում Դիմողը, առանց հիմնավոր պատճառի և պարզաբանումների, առաջարկել է որպեսզի Պատասխանող Կարեն Հովհաննիսյանն այլևս չմասնակցի քրեական գործով դատաքննությանը, որի մասին Պատասխանող Վարդուհի Էլբակյանը հայտնել է իր գործընկերոջը:

Հետագայում՝ մեր հերթական հանդիպումից հետո, Դիմողը Պատասխանող Վարդուհի Էլբակյանի գրասենյակից հեռացել է շատ ջերմ, իբր մտահոգված Վարդուհի Էլբակյանի առողջությամբ և իբր գոհ, ապա, առանց հիմնավոր պատճառի և պարզաբանումների, հրաժարվել է նաև Էլբակյանի իրավաբանական օգնությունից:

Միայն Պալատի նախագահին հասցեագրված դիմումի բովանդակությունից պարզ է դարձել, որ դիմումում Դիմողը, ըստ էության, բացի վիրավորելուց, անվանարկելուց և իրականության հետ որևէ աղերս չունեցող հանգամանքներ ներկայացնելուց, որևէ փաստարկված հանգամանքի չի անդրադարձել: Դիմողի բոլոր մեղադրանքները մերկապարանոց են, որոնց ամբողջությամբ Պատասխանող Վարդուհի Էլբակյանը կանդրադառնա կարգապահական նիստի ընթացքում:

Պատասխանող Վարդուհի Էլբակյանը նշել է, որ Դիմողը, մեղադրելով իրեն ազատ ունկնդիր լինելու և երկկողմանի վարձատրության մեջ, դա անում է իր անդառնալի և ոչ գրագետ գործելաոճն արդարացնելու համար, քանի որ Պատասխանողը միջնորդություններ չի ներկայացրել՝ ելնելով դրանց՝ Դիմողի՝ որպես իր վստահորդի շահերին հակառակ լինելուց, ինչպես նաև Պատասխանողին զգուշացրել է, որ այդ միջնորդությունները ներկայացնելու դեպքում ամբաստանյալը կարդարացվի, չէր կարող միանալ և խրախուսել Դիմողի պահվածքը, մերկապարանոց հայտարարությունները դատավորի, նրա կնոջ, մեղադրանքը ներկայացնող դատախազի, մարզի դատախազի կաշառված լինելու մասին:

Պատասխանող Վարդուհի Էլբակյանի համոզմամբ, դիմումի բովանդակությունը կրում է սուբյեկտիվ, չհիմնավորված, չփաստարկված ենթադրությունների բնույթ: Մասնավորապես, դատական նիստերին չմասնակցելու կամ դրանցից ուշանալու մասով Պատասխանողը նշել է, որ ինքն ու մյուս Պատասխանող Կարեն Հովհաննիսյանը մասնակցել են գրեթե 17 դատական նիստերի, եղել են դեպքեր, որ զբաղվածության, առողջական կամ ընտանեական այլ խնդրի պատճառով ինքը չի մասնակցել դատական նիստի, սակայն չի եղել դեպք, որ իր բացակայությունը համարվի անհարգելի, քանի որ ինքը մշատապես զգուշացրել է թե՛ Դիմողին և թե՛ դատարանին: Բացի այդ, գրեթե միշտ այս կամ այն պատճառով Դիմողը խնդրում էր, որպեսզի Պատասխանող Վարդուհի Էլբակյանի միջոցով դատական նիստերն ուշ-ուշ նշանակվեն, որի պատճառը կարող է հայտնի լինել միայն Դիմողին: Ինչ վերաբերում է դատական նիստերին ուշացած ներկայանալուն, ապա, ըստ Պատասխանողի, բոլոր նիստերին ինքն ու Դիմողը Գյումրիից Երևան ավտոմեքենայով միասին են մեկնել առավոտյան ժամը 10:30-ին, միգուցե մի փոքր ուշ, քանի որ նիստերը նշանակվում էին 12:00-ին կամ 12:30-ին, իսկ դատական նիստի ավարտից հետո միասին վերադարձել են Երևան: Ըստ Պատասխանող Վարդուհի Էլբակյանի՝ փաստացի հնարավոր չէր, որպեսզի ինքն այդ ընթացքում հասցներ մտնել դատախազություն, ցուցումներ և երկկողմանի վարձատրություն ստանալ, ինչպես պնդում է Դիմողը:

Ըստ Պատասխանող Վարդուհի Էլբակյանի՝ հատկանշական է, որ փաստորեն Դիմողը, իր դիմումում ներկայացված հանգամանքներին հիշատակված օրերով տեղեկացված լինելով, շարունակել է օգտվել Պատասխանողների ծառայությունից և միայն մեկ տարի անց է հիշել, որ բավարարված չէ Պատասխանողների մատուցած իրավաբանական օգնությամբ: Պատասխանողն ընդգծել է, որ մինչև իր և մյուս Պատասխանողի՝ նշված գործում Դիմողի՝ որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ ներգրավվելը, նույն կարգավիճակում ներգրավված են եղել այլ փաստաբաններ, որոնցից քննության որևէ փուլում Դիմողը դարձյալ նույնաբնույթ դիմումների ներկայացմամբ հրաժարվել է, ինչը հիմք է տալիս հանգելու ողջամիտ հետևության, որ այդ ամենը Դիմողի ոճն է:

Պատասխանող Վարդուհի Էլբակյանը նշել է, որ դիմումում նշված մյուս հանգամանքներին կանդրադառնա բանավոր, քանի որ դրանց մասին գրավոր խոսել հնարավոր չէ:

Պատասխանող **Կարեն Հովհաննիսյանը** Պալատ ներկայացված իր բացատրության մեջ հայտնել է, որ Պատասխանող Վարդուհի Էլբակյանի հետ եղել է ՇԴ/2/0037/01/15 քրեական գործով Դիմողի՝ որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Դիմողի կողմից տրված լիազորագրի հիման վրա: Սույն քրեական գործով իրավաբանական օգնություն ցուցաբերելու ժամանակաընթացքում Պատասխանող Վարդու Էլբակյանից տեղեկացել է, որ Դիմողը, առանց հիմնավոր պատճառի և պարզաբանումների, առաջարկել է, որ ինքն այլևս չմասնակցի քրեական գործով դատաքննությանը:

Այնուհետև, միայն Պալատի նախագահին Դիմողի հասցեագրած դիմումից Պատասխանող Կարեն Հովհաննիսյանին պարզ է դարձել, որ դիմումի բովանդակությունը վստահաբար կրում է սուբյեկտիվ, չհիմնավորված, չփաստարկված ենթադրությունների բնույթ: Ի հիմնավորումն սույն պնդման՝ Դիմողը ներակայացրել է իր հակափաստարկները:

Պատասխանողները Դիմողի մասնակցությամբ նշված քրեական գործին ներգրավվել են 30.06.2016թ. նշանակված դատական նիստում և, հաշվի առնելով քրեական գործի ծավալը (10 հատոր), միջնորդել են դատարանին ողջամիտ ժամկետ տրամադրել քրեական գործի նյութերին ծանոթանալու համար:

Քրեական գործի նյութերին ծանոթանալուց հետո բազմաթիվ առիթներով, յուրաքանչյուր դատական նիստի նախօրյակին Պատասխանողները Դիմողի հետ քննարկել են իրենց մարտավարությունը, անգամ դատավարության մասնակցին առաջադրվելիք հարցերի հաջորդականությունը և բովանդակությունը, ինչն ակնհայտորեն Դիմողին ոգևորում էր: Մինչդեռ, ծանոթանալով Դիմողի դիմումին և դրանով ձևականորեն ներկայացրած փաստարկումներին, Պատասխանող Կարեն Հովհաննիսյանը փաստել է, որ Դիմողը ձևացրել է վերը նկարագրված վարքագիծը՝ ստեղծելով կարեկցանքի արժանի մարդու պատրանք:

Ինչ վերաբերում է դիմումում ներկայացված 14.07.2016թ. դատական նիստում պաշտպանության կողմի հայտնած ինքնաբացարկի միջնորդության քննարկմանը, կապված Պատասխանող Վարդուհի Էլբակյանի կողմից պաշտպան Արամայիս Հայրապետյանից ներողություն խնդրելուն, ապա դա, ըստ Պատասխանող Կարեն Հովհաննիսյանի, բացարձակ սուտ է և Դիմողի երևակայության, գուցե և արված հայտարարության բովանդակության ոչ ճիշտ ընկալման արդյունք:

Ինչ վերաբերում է դիմումի 2-5-րդ կետով շարադրված հանգամանքներին, Պատասխանող Կարեն Հովհաննիսյանը պնդել է, որ փաստաբան Ժորա Պետրոսյանն իր համակուրսեցի ընկերն է, ում մինչև խնդրո առարկա քրեական գործով Դիմողի ներկայացուցիչ ներգրավվելը երկար տարիներ չէր հանդիպել: Պատասխանողը դատական նիստերից մեկի ավարտից հետո դատարանի շենքի միջանցքում պատահական հանդիպել է Ժորա Պետրոսյանին, ում հետ ողջագուրվել է, զրուցել, տեղեկացել, որ Ժորա Պետրոսյանը և սույն քրեական գործով պաշտպան Արամայիս Հայրապետյանն աշխատում են Գյումրի քաղաքի նույն փաստաբանական գրասենյակում: Պատասխանողը հաստատել է, որ 08.08.2016թ., երբ պատրաստվում էին մեկնել Գյումրի քաղաք՝ հերթական դատական նիստի, Պատասխանողի բջջային հեռախոսահամարին է

զանգահարել Ժորա Պետրոսյանը և հայտնել, որ Արամայիս Հայրապետյանն արձակուրդ մեկնելու մեկնելու դիմում է ներկայացրել դատարան, և նիստը հետաձգվելու է: Նշված հեռախոսազանգից կարճ ժամանակ անց Պատասխանող Կարեն Հովհաննիսյանին է զանգահարել դատական նիստերի քարտուղարը և հայտնել, որ պաշտպանի՝ արձակուրդ մեկնելու կապակցությամբ դատական նիստն անժամկետ հետաձգվում է, իսկ հերթական դատական նիստի մասին գրավոր կծանուցեն:

Մեկ անգամ էլ, գուցե 19.09.2016թ., երբ Պատասխանողները Դիմողի և նրա դստեր՝ գործով վկա Աննա Ադալանյանի հետ պատրաստվում էին Երևան քաղաքից մեկնել Գյումրի քաղաք, վերջիններիս ներկայությամբ Պատասխանող Կարեն Հովհաննիսյանին զանգահարել է Արամայիս Հայրապետյանը և հայտնել, որ մահացել է մորեղբայրը, դիմում է ներկայացրել դատարան, և այդ կապակցությամբ դատական նիստ չի կայանալու: Ըոպեներ անց նույն առիթով դատական նիստի հետաձգման մասին Պատասխանողին հայտնել է նաև դատական նիստերի քարտուղարը:

Դիմումի 5-րդ կետում նշված հանգամանքը Պատասխանող Կարեն Հովհաննիսյանը համարել է պատրանքային և այդ պատճառով դրան չի անդրադարձել:

Ըստ Պատասխանող Կարեն Հովհաննիսյանի՝ հատկանշական է, որ փաստորեն Դիմողը, իր դիմումում ներկայացված հանգամանքներին հիշատակված օրերով տեղեկացված լինելով, շարունակել է օգտվել Պատասխանողների ծառայությունից և միայն մեկ տարի անց է հիշել, որ բավարարված չէ Պատասխանողների մատուցած իրավաբանական օգնությամբ:

Կարեն Հովհաննիսյանը վիճարկում է Դիմողի՝ որպես վստահորդի այն տրամաբանությունն ու համոզումը, որ քրեական գործով դատավարական հակառակորդներ հանդիսացող փաստաբանները դատաքննության իրավական ռեժիմում ունեցած շահերի բախման կամ հակասությունների պայմաններում նշված տրամադրվածությունը պետք է պահպանեն նաև դատաքննությունից դուրս: Ըստ այդմ, Պատասխանողը վստահեցնում է, որ Դիմողի ներկայացրածը բացառապես ենթադրություն է և կրում է Պատասխանողների հեղինակությունն ու բարի համբավը խեղելու միտում:

Պատասխանողն ընդգծել է, որ մինչև իր և մյուս Պատասխանողի՝ նշված գործում Դիմողի՝ որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ ներգրավվելը, նույն կարգավիճակում ներգրավված են եղել այլ փաստաբաններ, որոնցից քննության որևէ փուլում Դիմողը դարձյալ նույնաբնույթ դիմումների ներկայացմամբ հրաժարվել է, ինչը հիմք է տալիս հանգելու ողջամիտ հետևության, որ այդ ամենը Դիմողի ոճն է:

Պալատի խորհրդի նիստի ընթացքում Պատասխանողները ևս հանդես են եկել բացատրություններով:

Պատասխանող **Կարեն Հովհաննիսյանը** նշել է, որ Դիմողն ամեն տեղ ձգտում է ընդգծել է իր անհատականությունը՝ ի տարբերություն Պատասխանողների, և նաև դա է եղել իրենց տարաձայնությունների պատճառը: Ըստ էության, Դիմողի մեղադրանքը, Պատասխանող Կարեն Հովհաննիսյանի մասով սահմանափակվում է նրանով, որ վերջինս դատական նիստից դուրս շփվել է իր կուրսընկեր հանրային պաշտպան Ժորա Պետրոսյանի հետ, որը Դիմողի գործով անգամ դատավարության մասնակից չի եղել և գործով պաշտպան Արամայիս Հայրապետյանի հետ, ինչը Դիմողին հիմք է տվել պնդելու, որ Պատասխանող Կարեն Հովհաննիսյանը համագործակցում է պաշտպանության կողմի

հետ: Սույն մեղադրանքը Պատասխանող Կարեն Հովհաննիսյանն ընդունելի և հիմնավորված չի համարում: Ըստ Կարեն Հովհաննիսյանի՝ բարեխիղճ իրավաբանական ծառայության մատուցման համար փաստաբանի և վստահորդի միջև պետք է լինի ներդաշնակություն, այլ ոչ թե, օրինակ՝ Դիմողը գաղտնագողի հանդիպի Պատասխանող Վարդուհի Էլբակյանի հետ և նրան ասի, որ հրաժարվում է Կարեն Հովհաննիսյանի ծառայությունից: Որպես իրենց բարեխիղճ ծառայության օրինակ՝ Պատասխանողը նշել է, որ միայն 5 օր ինքն ու մյուս Պատասխանող Վարդուհի Էլբակյանը ծանոթացել են գործի նյութերին, Պատասխանողները բարեխղճորեն ներկայացել են դատական նիստերին, որոնց հետաձգումը պայմանավորված չի եղել Պատասխանողների սխալ գործողություններով:

Պատասխանող **Վարդուհի Էլբակյանն** իր բացատրության մեջ նշել է, որ փաստաբան Արա Ղարագյոզյանը, ում առաջարկությամբ Պատասխանողներն ստանձնել են Դիմողի շահերի պաշտպանությունը, պատմել է, որ Դիմողը նախկինում ունեցել է այլ փաստաբաններ, ում հետ մշտապես խնդիրներ է ունեցել:

Դիմողի հետ Պատասխանողներն ինչպես գործը վերցնելիս, այնպես էլ հետագայում հանդիպել են իրենց գրասենյակում, մշտապես քննարկել են գործի հետ կապված հանգամանքները: Գործի նյութերին ծանոթանալուց հետո Պատասխանողները Դիմողին հայտնել են, որ տեղի է ունեցել թերի նախաքննություն, որի ժամանակ Դիմողի ներկայացուցիչներ են եղել այլ փաստաբաններ, ինչի պատճառով այն դատավարական գործողությունները, որոնք կարող էին կատարվել նախաքննության փուլում և չեն կատարվել, դատաքննության ժամանակ Պատասխանողները՝ որպես Դիմողի ներկայացուցիչներ սահմանափակված են այդ գործողությունների կատարման հարցում: Իրենց քննարկումներին մշտատես մասնակցում էր Հովսեփ Սարգսյանը և իրենք Դիմողին բացատրում էին, որ նրա կողմից նախատեսվող միջնորդությունների՝ դատարան ներկայացման դեպքում կվտանգվի գործով դատավճիռ ունենալը, քանի որ եթե իրենք չափից դուրս շատ վեր հանեն դատավարական խախտումները, դատարանը կարող է արդարացման դատավճիռ կայացնել: Որպես հիմնավորում Վարդուհի Էլբակյանը վկայակոչում է դատական նիստերում ամբաստանյալի պաշտպանի վարքագիծը Դիմողի միջնորդություններից հետո, երբ պաշտպանը մի քանի անգամ շնորհակալություն է հայտնել Դիմողին պաշտպանության կողմի փոխարեն դատարանում հանդես գալու համար: Դիմողը մշտապես ներկայացրել է իր միջնորդությունները և տեղյակ է եղել, որ Պատասխանող Վարդուհի Էլբակյանը համաձայն չէ այդ միջնորդությունների հետ, ուստի՝ ինքը դրանք դատարանին չի ներկայացնում: Պատասխանող Վարդուհի Էլբակյանը դատարան ներկայացրել է այն միջնորդություններն ու հարցադրումները, որոնք իր մարտավարության շրջանակներում գտել է նպատակահարմար:

Դիմողը դատակոչված էր որպես վկա և այն բոլոր վկաները, ու Պատասխանողները դատակոչել էին և հօգուտ Դիմողի պետք է վկայություն տային, կա՛մ չեն ներկայացել, կա՛մ տվել են իրենց ի վնաս ցուցմունքներ: Դիմողը հարցրեց՝ հնարավոր է իր դուստրը չգա, քանի որ իր համար ծանր է դատարանում վկայություն տալը, ինչը նաև Դիմողի դուստրն է իրենց ասել, ինչին Պատասխանողները համաձայնել են՝ նշելով դատարանում, որ ականատես վկա չի եղել:

Գործի նյութերին Պատասխանողները ծանոթ են եղել, իսկ գործի նյութերը Պատասխանող Վարդուհի Էլբակյանը կարող է՝ ոչ ամբողջությամբ բերեր դատարան,

քանի որ դա ընդունված պրակտիկա է, երբ դատարան են բերվում գործի այն նյութերը, որոնք անհրաժեշտ են: Տվյալ պարագայում գործի նյութերի ծավալը եղել է մեծ, և հնարավոր չէր դրանք ամբողջությամբ բերել դատարան:

Ինչ վերաբերում է դատական նիստերի բազմիցս հետաձգվելուն, ապա Պատասխանող Վարդուհի Էլբակյանը նշել է, որ ունեցել է առողջական խնդիրներ, մայիս ամսին վիրահատվել է, իսկ փետրվար ամսին Դիմողն անգամ քաղցրավենիքով այցելել է Պատասխանող Վարդուհի Էլբակյանի տուն, քանի որ վերջինս հիվանդ էր և տառապում էր սուր որովայնային ցավերով: Քանի որ Պատասխանողը վիրահատվել էր, հաջորդ դատական նիստին բժշկական փաստաթղթերով չէր կարող ներկայանալ: Իսկ դրանից առաջ և հետո Դիմողն է հիվանդ եղել, հիվանդանոցային բուժում է անցել, և Պատասխանողը բժշկական փաստաթղթերն ուղարկել է դատարան՝ միջնորդելով դատական նիստը հետաձգել: Բացի այդ, Պատասխանող Վարդուհի Էլբակյանը մեկ անգամ խնդրել է Դիմողի համաձայնությունը դատական նիստի հետաձգմանը, քանի որ Պատասխանողը ցանկանում էր մասնակցել որդու հանդեսին, ինչին Դիմողը չի առարկել: Դիմողի հետ գտնվել են շատ լավ հարաբերությունների մեջ:

Պատասխանողը հերքում է, որ համագործակցել է դատախազության հետ: Ընդհանրապես, տուժող կողմը պետք է լինի մեղադրանքի կողմից: Տվյալ դեպքում իրենց հարաբերությունները մեղադրանքի հետ լավ չեն եղել, իրենք ընդունել են, որ եղել են խախտումներ: Գրեթե բոլոր նիստերում Դիմողը ներկայացրել է բացարկի միջնորդություն դատախազին, ինքնաբացարկի միջնորդություն՝ դատավորին: Մինչդեռ, Պատասխանողն ընդունելի և արհեստավարժ չի համարում ինքնանապատակ և անհիմն միջնորդություններ ներկայացնելը, մերկապարանոց մեղադրանքներ հնչեցնելը դատախազի, դատավորի հասցեին:

Ինչ վերաբերում է Լուսինե Գինոսյանին, ապա Պատասխանող Վարդուհի Էլբակյանը նշել է, որ Լուսինե Գինոսյանի՝ Դիմողի որդու սպանության պատվիրատու լինելու հանգամանքը Դիմողի կողմից բարձրացվել է իրենց ծառայություններից հրաժարվելուց հետո: Ինքը Դիմողից լսել է, որ Լուսինե Գինոսյանը Դիմողին պարտք է եղել մեծ գումարներ, սակայն Լուսինե Գինոսյանի՝ Դիմողի որդու սպանության պատվիրատու լինելու հարց Դիմողը Պատասխանողների առջև չի բարձրացրել:

Տարբեր դանակների և փորձագետի եզրակացության մասով Պատասխանող Վարդուհի Էլբակյանը հայտնել է, որ փորձագետի եզրակացությունը համարում է բավական թերի: Պատասխանողը հարցաքննել է փորձագետին, և առկա է եղել սուր իրավիճակ, անգամ, Պատասխանողի հիշելով, իր նկատմամբ դատական սանկցիա է կիրառվել: Դիմողը ներկայացրել է Պատասխանողին միջնորդության նախագիծ կրկնակի կամ լրացուցիչ (Պատասխանող Վարդուհի Էլբակյանն ստույգ չի հիշում) փորձաքննություն անցկացնելու վերաբերյալ, որը Պատասխանողի կողմից ներկայացվել է դատարան, սակայն միջնորդությունը մերժվել է:

Պատասխանողը Վարդուհի Էլբակյանը նշել է, որ Դիմողի հետ իր և մյուս Պատասխանողի համաձայնությունը եղել է, որ իրենց իրավաբանական ծառայության արժեքը բոլոր ատյանների դատարաններում ներկայացուցչության համար մոտավորապես 1.400.000 ՀՀ դրամ է, որը Դիմողը պետք է վճարի մաս-մաս: Դիմողը, նախ՝ վճարել է 200.000 կամ 300.000 ՀՀ դրամ (Պատասխանողն ստույգ չի հիշում), ապա՝ 100.000 ՀՀ դրամ: Դիմողը բերել է իր անձնագիրը, նրանց միջև պետք է կնքվեր պայմանագիր,

սակայն Դիմողի կողմից վճարվելիք մնացյալ գումարի վերաբերյալ նրանց միջև խոսակցություն չի եղել, և հնարավոր չի եղել վերջնականապես որոշել, թե որքան պետք է վճարի Դիմողը, ինչի հետևանքով պայմանագիր չի կնքվել:

Պատասխանող Վարդուհի Էլբակյանը գտնում է, որ Դիմողի կողմից վճարված գումարի որևէ մաս վերադարձման ենթակա չէ, քանի որ իրենց մատուցած ծառայության դիմաց դա չնչին գումար է եղել:

Պատասխանողը նաև հայտնել է, որ Դիմողի ցուցմունքի հետ կապված անհրաժեշտ աշխատանքներ են տարվել Դիմողի հետ. նրան բացատրվել են իր իրավունքներն ու պարտականությունները, մշակվել է ցուցմունքի բովանդակությունը:

Ինչ վերաբերում է Դիմողի պնդմանը, որ դատաքննության ժամանակ շինծու Շտապ օգնություն է կանչվել, ապա Պատասխանող Վարդուհի Էլբակյանը նշել է, որ առաջին անգամ, երբ դատական նիստի ընթացքում կանչվել է Շտապ օգնություն, բժիշկը դատարանի կողմից հարցաքննվել է: Երկրորդ անգամ Շտապ օգնություն է կանչվել ընդմիջման ժամանակ: Իսկ կանչի շինծու բնույթի որևէ հիմնավորում չի եղել, այլ եղել են միայն ասեկոսեներ, որոնք, ըստ Պատասխանողի, իր համար չէին կարող հիմք լինել:

Պատասխանող Վարդուհի Էլբակյանը պնդել է, որ իր և մյուս Պատասխանողի կողմից կատարվել են Դիմողի շահերի պաշտպանությանն ուղղված բոլոր գործողությունները: Գոյություն ունի նաև գործի անջատված մաս, որով ևս քննություն է ընթանում, սակայն իրենք դրանում ներգրավված չեն: Մինչդեռ, իրենց այդ մասով ևս Դիմողին իրավախոհրդատվություն են մատուցել:

Առկա է նաև հակասություն Դիմողի և իր նախկին ամուսնու միջև, ով հերքել է, որ գործով ամբաստանյալն է սպանել իր որդուն: Նույնը վերաբերում է նաև Դիմողի որդու ընկերներին, ովքեր հակասական ցուցմունքներ են տվել, ուստի՝ իրենք փորձել են կանխել գործի քննության այնպիսի ընթացքը, որ ամբաստանյալն արդարացվի:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործը նախապատրաստող անձը 24.01.2018թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն Պատասխանողները մասնակցել են թիվ ՇԴ2/0037/01/15 դատական գործով դատական նիստերին, նիստերը կայացվել են, ինչը երևում է դատական գործից և դատարանին ներկայացրել միջնորդություններ:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 26.01.2018թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 16.06.2018թ. ժամը 13:30-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում*

գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Փաստաբաններ Կարեն Հովհաննիսյանը և Վարդուհի Էլբակյանը հանդիսացել են Ռուզան Ադալանյանի պաշպանները ՇԴ2/0037/01/15 քրեական գործով:
- 29.09.2017թ. Կարեն Հովհաննիսյանը Ռուզան Ադալանյանի ցանկությամբ դադարեցրել է ներկայացրել վերջինիսի շահերը ՇԴ2/0037/01/15 քրեական գործով:
- Ռուզան Ադանալանյանը վճարել է փաստաբաններ Կարեն Հովհաննիսյանի և Վարդուհի Էլբակյանի հոնորարի պայմանավորված 1.400.000 ՀՀ դրամ գումարի մի մասը:
- Ռուզան Ադալանյանի և փաստաբաններ Կարեն Հովհաննիսյանի և Վարդուհի Էլբակյանի միջև առկա էին տարաձայնություններ և հակասություններ գործի վարման մարտավարության և կատարվելիք դատավարական գործողությունների շուրջ, ինչի արդյունքում Ռուզան Ադալանյանն իր փաստաբանների համաձայնության բացակայության պայմաններում ներկայացրել է միջնորդություններ և կատարել դատավարական այլ գործողություններ:
- Ռուզան Ադալանյանի դժգոհությունը ՇԴ2/0037/01/15 քրեական գործով իր փաստաբանների ներկայացուցչությունից էապես առնչվել է նախաքննության ժամանակ փաստաբանների գործողություններին, ովքեր եղել են այլ անձինք:
- Փաստաբան Վարդուհի Էլբակյանը փետրվարին բացակայել է դատական նիստերից առողջական խնդիրների պատճառով, իսկ մայիս ամսվա դատական նիստերին փաստաբան Վարդուհի Էլբակյանը չի ներկայացել վիրահատության ենթարկվելու պատճառով, մեկ անգամ, Ռուզան Ադալանյանի համաձայնությամբ, փաստաբան Վարդուհի Էլբակյանի որդու դպրոցական հանդեսին Էլբակյանի մասնակցության պատճառով, մի շարք դատական նիստեր Վարդուհի Էլբակյանի միջնորդությամբ հետաձգվել են Ռուզան Ադալանյանի հիվանդության, ինչպես նաև դատական նիստին ամբաստանյալի ինքնազգացողության վատացման պատճառներով:
- Պատասխանող Կարեն Հովհաննիսյանի շփումներն ամբաստանյալի պաշտպան Արամայիս Հայրապետյանի հետ պայմանավորված են եղել իր կուրսընկեր հանրային պաշտպան Ժորա Պետրոսյանի գործընկերը լինելու հանգամանքով և չեն վերաբերել ՇԴ2/0037/01/15 քրեական գործով որևէ հնարավոր համաձայնությանը՝ ի վնաս Կարեն Հովհաննիսյանի վստահորդ Ռուզան Ադալանյանի շահերի:

Սույն փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով և, մասնավորապես, Ռուզան Ադալանյանի՝ 19.10.2017թ. Պալատ մուտքագրված դիմումով, փաստաբաններ Կարեն Հովհաննիսյանի և Վարդուհի Էլբակյանի, ինչպես նաև Ռուզան Ադալանյանի բացատրություններով, դատական նիստի էլեկտրոնային արձանագրությամբ:

6. **<u>Պատասխանողների անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝

Պատասխանող Վարդուհի Էլբակյանը փաստաբան է հանդիսանում 19.03.1999թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել՝ չհաշված սույն կարգապահական վարույթը.

Պատասխանող Կարեն Հովհաննիսյանը փաստաբան է հանդիսանում 02.05.2012թ., և 2015-2018թ. նրա նկատմամբ մեկ անգամ հարուցվել է կարգապահական վարույթ՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

Խորհրդի 28.09.2017թ. թիվ ԿԳ/88 որոշմամբ Կարեն Հովհաննիսյանի նկատմամբ կարգապահական վարույթը կարճվել է:

7. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ Պալատի նախագահի 20.11.2017թ. թիվ 451-Ա/ԿԳ-1781 որոշման հիման վրա փաստաբաններ Կարեն Հովհաննիսյանի և Վարդուհի Էլբակյանի նկատմամբ 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.8.5 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ *փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի *փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:*

Կանոնագրքի 3.8.5 (1) ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 կանոններով սահմանվում է վստահորդին բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալու փաստաբանի պարտականությունը, և կոնկրետացված են այդ պարտականության իրացման մի շարք չափանիշներ՝

մասնագիտական ձեռնհասությունը, հանձնարարության ժամանակին կատարումը, զբաղվածության կամ այլ պատճառով հանձնարարության պատշաճ կատարման անհնարինության պարագայում այն չընդունելու պարտականությունը, վստահորդին ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար իրավախորհրդատվություն մատուցելն ու նրա շահերի ներկայացուցչություն իրականացնելը:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանն ունի իր վստահորդի շահերի ներկայացուցչության ուղղվածության, մարտավարության, միջոցների և մեթոդների ընտրության ազատություն՝ պայմանով, որ գործում է ի շահ իր վստահորդի:

Փաստաբանի սույն պարտականությունը բխում է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 5-րդ հոդվածի 1-ին մասից, որի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով, ինչպես նաև Օրենքի 18-րդ հոդվածով փաստաբանին վերապահված իրավունքների բնույթից և բովանդակությունից: Փաստաբանությունը մասնագիտական իրավապաշտպան գործունեություն է, որը ենթադրում է փաստաբանի ազատություն և անկախություն ոչ միայն այլ անձանց, հասարակության և պետության որևէ անիրավաչափ ազդեցությունից, այլև հենց վստահորդի այնպիսի կարգադրություններից, որոնք մտնում են փաստաբանի օպերատիվ գործունեության ոլորտ և առնչվում են փաստաբանի մասնագիտական գիտելիքներին, գործնական հմտություններին և գործը վարելու մարտավարությանը:

Մասնավորապես, Եվրոպայի փաստաբանների վարքագծի կանոնագրքի **2.1.1.** ենթակետի համաձայն՝ *փաստաբանի բազմաթիվ պարտականությունների կատարումը պահանջում է փաստաբանի բացարձակ անկախություն, որը պետք է ազատ լինի ցանկացած այլ ազդեցությունից, հատկապես այնպիսի ազդեցությունից, որը կարող է ծագել փաստաբանի անձնական շահերից կամ արտաքին ճնշումից: Նման անկախությունն անհրաժեշտ է արդարադատության գործընթացի և, մասնավորապես, դատավորի անկողմնակալությանը վստահելու համար: Հետևաբար, փաստաբանը պետք է զերծ մնա իր անկախության որևէ խոչընդոտից և չնսեմացնի իր մասնագիտական չափորոշիչները վստահորդին, դատարանին կամ երրորդ անձանց գոհացնելու համար:*

Միևնույն ժամանակ փաստաբանը, լինելով ազատ վստահորդի գործը վարելու հետ կապված, այդուհանդերձ, կաշկանդված է վստահորդի հանձնարարության բնույթով և բովանդակությամբ և դրանցից բխող՝ վստահորդի օրինական շահերով, որոնց պաշտպանությունը պետք է լինի փաստաբանի գործունեության հիմնական նպատակը:

Կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն՝ *օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից, և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:*

Համանման պահանջ է պարունակում նաև Եվրոպայի փաստաբանների վարքագծի կանոնագրքի 2.7. ենթակետը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ փաստաբանը պարտավոր է իր գործունեության ընթացքում պահպանել հավասարակշռություն մի կողմից մասնագիտական

անկախության, իսկ մյուս կողմից վստահորդի շահերով առաջնորդվելու պարտականության միջև:

Անդրադառնալով Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.8.5 (1) ենթակետերի խախտման հանգամանքին Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողների կողմից թույլ չի տրվել նշված ենթակետերի խախտում: Խորհուրդը հիմնավոր չի համարում Դիմողի այն պնդումն առ այն, որ Պատասխանողները դատական նիստերին մասնակցել են՝ առանց գործի նյութերին ծանոթանալու, եղել են պասիվ, չեն կատարել անհրաժեշտ դատավարական գործողություններ, քանի որ կարգապահական գործի քննության ընթացքում հիմնավորվել է, որ Դիմողն ու Պատասխանողներն ունեցել են տարաձայնություններ և հակասություններ գործի վարման մարտավարության և մեթոդների, այդ թվում կատարվելիք դատավարական գործողությունների վերաբերյալ: Տվյալ իրավիճակում տրամաբանական է, որ Դիմողը չի կարող բավարարված լինել փաստաբանների գործունեությամբ, բայց միաժամանակ դրանով չի հիմնավորվում փաստաբանների կողմից անբարեխիղճ ներկայացուցչություն իրականացնելու փաստը, քանի որ այն հանգամանքը, որ Դիմողը համաձայն չի եղել փաստաբանների դատավարական վարքագծի հետ, չի նշանակում, որ այն եղել է սխալ կամ անհիմն: Ավելին՝ ինչպես վերը նշվեց, փաստաբանի անկախության սկզբունքը գործում է նաև վստահորդների հետ հարաբերություններում, ովքեր ողջամիտ վստահություն պետք է ունենան փաստաբանի հանդեպ և առանց հիմնավոր պատճառի՝ չմիջամտեն փաստաբանի մասնագիտական գործունեությանը:

Խորհուրդը հիմնավոր չի համարում նաև Դիմողի պնդումներն առ այն, որ Պատասխանողները պարբերաբար, առանց հարգելի պատճառի, չէին ներկայանում դատական նիստերին: Դիմողը չի ներկայացրել որևէ հիմնավոր ապացույց, որը կհաստատեր իր այդ պնդումը: Ավելին՝ Դիմողը Խորհդի նիստում ըստ էության չառարկեց Պատասխանող Վարդուհի Էլբակյանի այն պնդմանը, որ դատական նիստերից իր բացակայելու դեպքերը պայմանավորված են եղել առողջական խնդիրներով, ինչպես նաև մեկ անգամ, Դիմողի համաձայնությամբ, Էլբակյանի որդու դպրոցական հանդեսին մասնակցելու հանգամանքով:

Խորհուրդը հիմնավոր չի համարում նաև Պատասխանողներին վերագրվող պաշտպանության և մեղադրանքի կողմերի հետ, ի վնաս Դիմողի, համագործակցելու մեղադրանքը: Դիմողի կողմից Պալատին չի ներկայացվել որևէ ապացույց, որը կհիմնավորեր իր այդ պնդումը: Մասնավորապես, Պատասխանող Կարեն Հովհաննիսյանի և պաշտպան Արամայիս Հայրապետյանի,Պատասխանող Կարեն Հովհաննիսյանի և փաստաբան Ժորա Պետրոսյանի միջև բարեկիրթ մարդկային հարաբերությունների առկայությունը կամ Պատասխանող Վարդուհի Էլբակյանի կողմից Դիմողի գործողությունների համար պաշտպանության կողմից ներողություն խնդրելը չեն կարող հիմք հանդիսանալ նման մեղադրանքի համար: Շահերի բախումից խուսափելը կամ ի վնաս վստահորդի՝ հակառակ կողմի հետ գործակցելու արգելքը չեն բացառում փաստաբանների միջև գործընկերային և նույնիսկ ընկերական հարաբերությունների առկայությունը, ինչպես նաև հակառակ կողմից ներողություն խնդրելը դատավարության ժամանակ չի նշանակում, որ հակառակ կողմի և վստահորդի փաստաբանի միջև կա փաստաբանական էթիկայի տեսանկյունից անհիրավաչափ կապ:

Նույնը վերաբերում է նաև Դիմողի մյուս պնդումներին, կապված դատական նիստերից Պատասխանողների պարբերաբար ուշանալու, դատական նիստում ամբաստանյալի, իբրև թե, կեղծ վատառողջության հետ և այլն:

Ինչ վերաբերում է Կանոնագրքի 3.8.5 (1) ենթակետում Պատասխանողների ենթադրյալ մեղավորությանը, ապա Խորհուրդը, հաշվի առնելով, որ գործի քննությամբ չի ապացուցվել Պատասխանողներին մեղսագրվող ոչ բարեխիղճ մասնագիտական գործունեության վարքագիծը, ապա չի հիմնավորվում նաև, ընդհանրապես, Պատասխանողների կողմից Դիմողի համար աշխատանքի կամ դրա մի մասի չկատարման փաստը:

Նշվածի հաշվառմամբ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողների կողմից թույլ չի տրվել Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.8.5 (1) ենթակետերի խախտում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 20.11.2017թ. թիվ 451-Ա/ԿԳ-17181 որոշման հիման վրա փաստաբաններ Վարդուհի Էլբակյանի (արտոնագիր՝ թիվ 28) և Կարեն Հովհաննիսյանի (արտոնագիր՝ թիվ 1352) նկատմամբ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.8.5 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Մելանյա Առուստամյան**

16 հունիսի 2018թ.
թիվ ԿԳ/99-Ա
ք. Երևան